

# Դասի պլան

Առարկան-Քիմիա Ուսուցիչ՝ Ա.Մանուկյան		
Դասարանը-VII	Ուս.տարի-2024-2025	Կիսամյակ-1-ին
<b>Թեման</b>	2.2 Ատոմի կառուցվածքը:	
<b>Նպատակը</b>	Զնավորել գիտելիքներ ատոմի կառուցվածքի և ներատոմային մասնիկների (լիցք ու զանգված) վերաբերյալ:	
<b>Վերջնարդյունքները</b>	<p>1.Ք7.ՆՄԲ.ԱՏՆ.2 Նկարագրել ատոմի կառուցվածքը միջուկի, պրոտոնների, նեյտրոնների և էլեկտրոնների տեսանկյունից:</p> <p>2.Ք7.ՆՄԲ.ԱՏՆ.3 Ներկայացնել պրոտոնի, նեյտրոնի և էլեկտրոնի հարաբերական զանգվածն ու լիցքը:</p>	
<b>Խնդիրները</b>	Ներկայացնել Թոմսոնի և Ռեզերֆորդի մոդելները և համեմատել: Ցույց տալ ներատոմային մասնիկների բաշխվածությունը ատոմի կառուցվածքի գծապատկերի վրա:	
<b>Միջառարկայական կապեր</b>	<p>Հայոց լեզու – Կարդալու, կարդացածը հասկանալու, կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարներն առանձնացնելու, նյութի հիմնական գաղափարը բանավոր և գրավոր ներկայացնելու կարողություն: Հարցադրումները ճիշտ ձևակերպելու, պարբերական աղյուսակի և այբուբենի միջև զուգահեռներ տանելու կարողություն:</p> <p>Մաթեմատիկա – Մաթեմատիկական հաշվարկների հմտություն:</p> <p>Բնություն – Նախնական պատկերացում ատոմի մասին:</p>	
<b>Խաչվող հասկացություններ</b>	Չամակարգեր և մոդելներ Քիմիական տարրերի պարբերական համակարգը քիմիական տարրերի հատկությունների դասակարգման արդյունք է:	
<b>Դասի ընթացքը</b> Դասի սկիզբ-15ր	Կազմակերպչական մաս, հաշվառում, անդրադարձ թեմատիկ աշխատանքի առանցքային հարցերին, անհասկանալի հարցերի պարզաբանում: Ուսուցիչը տալիս է հայտորոշիչ հարցեր ատոմի կառուցվածքի մասին, պարզելու աշակերտների գիտելիքները թեմայից: Նշում է թեմայի նպատակը և վերջնարդյունքները:	
Նոր նյութի հաղորդում-15ր	Գրատախտակին գրում է դասի բանալի բառերը. ատոմի կառուցվածք, մոլորակային մոդել, միջուկ, պրոտոն, նեյտրոն, էլեկտրաչեզոք մասնիկ: տարբերությունները: Ուսուցիչը ցույց է տալիս Ռեզերֆորդի և Թոմսոնի մոդելների նկարները, բացատրում նմանություններն ու տարբերությունները:	

	<p>Թվարկում է ներատոմային մասնիկները, նշելով լիցքը և զանգվածը:          Համակարգչի և պրոյեկտորի օգնությամբ ցույց է տալիս և բացատրում լաբսթեր սիմուլյացիան` &lt;&lt;Ատոմի կառուցվածքը&gt;&gt;:  <a href="https://my.labster.com/course/673c9e273f469638838a6ba1/simulations/a0K2X00000vWvyxUAC">https://my.labster.com/course/673c9e273f469638838a6ba1/simulations/a0K2X00000vWvyxUAC</a>          Մեկնաբանում է սիմուլյացիան:          Կատարում է ընկալման ստուգում.          1. Ի՞նչ ներատոմային մասնիկներ տեսաք սիմուլյացիայում:          2. Որտե՞ղ են տեղադրված նեյտրոնները և ի՞նչ գույնով են ներկված:          3. Որտե՞ղ են տեղադրված պրոտոնները և ի՞նչ գույնով են ներկված:          4. Որտե՞ղ են տեղադրված էլեկտրոնները և ի՞նչ գույնով են ներկված:</p>
<p>Ամրապնդում 10ր</p>	<p>Խմբային աշխատանք          Դասարանը բաժանում է 4 հոգանոց խմբերի, բացատրում աշխատանքը. նկարել Ռեզերֆորդի և Թոմսոնի մոդելները: Վերառել սիմուլյացիայի ատոմի մոդելը՝ ներատոմային մասնիկները ներկելով համապատասխան գույներով, նշել մասնիկների լիցքը և զանգվածը: Ունե՞ք 7 բ ժամանակ          Հիշեցնում է, որ պետք է աշխատեն անադմուկ, խմբի ներսում լսեն բոլորի կարծիքը, անհրաժեշտության դեպքում բացատրեն ընկերջը: Կատարում է ընկալման ստուգում,          1. Ի՞նչ ենք անելու:          2. Ինչպե՞ս ենք աշխատելու;          3. Որքա՞ն ժամանակ ունենք:          Աշխատանքի ընթացքում ուսուցիչը մոտենում և ուղղորդում է խմբերին, ստուգում աշխատանքները:</p>
<p>Ամփոփում 5ր</p>	<p>Ուսուցիչը անդրադարձ է կատարում դասի վերջնարդյունքներին: Ամփոփում է դասը &lt;&lt;Անավարտ նախադասություններ&gt;&gt; մեթոդով;          1. Ես այսօր սովորեցի.....          2. Ինձ հատկապես հետաքրքրեց.....</p>
<p>Գնահատում</p>	<p>Ձևավորող գնահատում (խմբային աշխատանքի և ընկալման ստուգման հարցերի միջոցով, բանավոր բառերի միջոցով խրախուսում է, նշում բարելավման ուղղությունները):</p>
<p>Տնային առաջադրանք</p>	<p>Սովորել դաս 2.2, էջ 48-50, կատարել էջ 50-ի 8 և 9 առաջադրանքները:</p>